



ԲԱԺԱՆՈՒՄ ԳՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պոչկարխոյ համար	
Տարեկան	12 թր.
Վեցամսեայ	6 »
Առանձին մասի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 սրլ.
Վեցամսեայ	1.50 »
ՎԱՆԻՔԻ ՎՃՌՆԵԼԻ	

Պատկերակա սուր անոթիկ երևիկ համար 40 սանթիմ է: Իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքիկ սանթիմ սեղանակա համար 20 ժողովուրդը կրչայ:

Պոչկարխոյ համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ) Վանկայի համար ձեռքի 10 սանթիմ

# ՇԱՐՔԻՆ

Նամակ եւ հրատարակի  
Կարգադրեալս հարցեիկն

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

(Austria)  
Mechtharistangasse  
W. 4  
Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱԶԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔՈՐ ԵՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Վրոթիւնիկ եւ յնն տրուի  
Արտատպակա համար ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)

## ՄԻ ԶԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մեր աշխատակից Ռուսնորը իր «Կովկասը կովկասցիներին» յոգևածում մասնացոյց էր արել Կովկասի Հայ Ինտելիգենցիայի ուսանալը և նրան հայութեան համար գրեթէ մի անպէտք և ուշադրութեան ոչ արժանի տարր ներկայացրել:

Այդ ախուր երեւոյթը գրեթէ մի դառն ճշարտութիւն է և ոչ այսօր, այլ դեռ շատ առաջ:

Ռուսական սղով կրթութիւն ստացած, մանաւանդ բարձրագոյն կրթութիւն ստացած կովասասի հայ երիտասարդութիւնը շատ չնչին դեր է կատարել կովկասահայութեան մտաւոր յաւասարակութեան և հասարակական գործերի մէջ: Բացառութիւն են կաղմում այն ուսանական կրթութիւն ստացողները, որոնք կովկասի հայութեան հասարակական եւ մտաւոր կեանքի մէջ որ և է աչքի զարկող և նշանակելի դեր են խաղացել: Մեծամասնութիւնը կամ իր հայեացքներով և տրամադրութիւններով կատարել ուս և եղել և կամ թէ միմիայն իր անհատական կեանքը պահովելու խնդրով լքաւզել: Այդ երիտասարդութիւնը մինչեւ 80 թականները բոլորովին հեռու է եղել հայ ժողովրդից, նա այժման է գիտեցել իր մայրենի լեզուն, այնքան է ճանաչել հայրենիքը և ժողովուրդը, որքան կարող էր այդ անել իր մանկական հասակում իր պարած գիւղի կամ քաղաքի մէջ. այնուհետեւ նա թէ լեզուով, թէ մտքով և թէ սրտով միշտ կտրված է եղել իր ժողովրդից և իր հայրենիքից:

80-ական թականներին և կսած, երբ արտասահմանեան կրթութիւն ստացող կովկասահայերի և Տաճկահայերի առաջնորդութեամբ սկսվեցին Տաճկահայ յեղափոխական շարժումները, կովկասեան ուս կրթութիւն ստացող երիտասարդութեան մի չնչին և յեղափոխական տրամադրութիւն ունեցող մասը, տեսնելով որ Ռուսական

յեղափոխականները բոլորովին չախլախլակ են, Ռուսաստանում Ռուսական յեղափոխութիւն ստեղծելը առայժմ անհնարին գործ է և շատ մեծ զոհողութիւններ է պահանջում, իսկոյն ենթարկվեց արտասահմանեան հայ երիտասարդութեան ազդեցութեան և սկսեց մասնակցել հայ յեղափոխութեան, ոչ իբր գործնական և ամեն վտանգ յանձն առնող յեղափոխականներ, այլ իբր խօսողներ, ծրագիր կազմողներ: Սրանք հետուից ու մտախից միայն ծանոթացել էին ուսական այն յեղափոխական դպրոցի հետ, որը իր ամբողջ կեանքում շարունակ խօսում էր և ֆրազէօր քարոզիչ յեղափոխականներ էր արտադրում. ուստի նմանեցին իրենց վարդապետներին:

Ռուս յեղափոխականները ուս ժողովրդի հետ չէին ապրում, ժողովրդի մէջ չէին գործում, դրա համար էլ նրանց գործունէութիւնը յարատեւ չեղաւ, և միայն անիշխանական կերպարանք ստացաւ, առանց ժողովրդի մէջ արմատ բռնելու: Երկուսն ալ զայրոցում դաստիարակված և թրծված կովկասահայ յեղափոխականները, Հայկական շարժումների սկզբում խոշոր խոշոր ծրագիրներով ու ճաներով ազգայնական միայն առաջնորդելու նպատակով և առաջին, երկրորդ անշարժութիւնից յետոյ իսկոյն լրվեցին: Սրանցից շատ քչերը համաձայնեցին յեղափոխութեան սեւ դժուարին և վտանգաւոր գործերը կատարելու յանձն առնել, միշտ աշխատեցին մնալ զեկավարողների դերում, առանց այդ դերը կատարելու գործնական պատրաստութիւնը և զոհողութեան պատրաստականութիւնը ունենալու, առանց աշխատելու ժողովրդի մէջ մտնելու: Վերջին տարիներում այդ տեսակների թիւն էլ շատ պակասեց. մեծամասնութիւնը ընկաւ, թուլացաւ և այսօր կովկասի հայութեան նորահաս բուրժուազիայի շարքերն է ամբարցնում, իսկ ամենաչնչին

մասը, կրկին յեղափոխականի պատկերով, բայց բոլորովին պահպանողական, չէ ուզում իրեն համար սովորական դարձած գիրքը կորցնել մեր շարժումների մէջ և խոչնդոտ է հանդիսանում այն ամեն քայլին որով միայն կարելի է Ռուսահայ սահպին զանգուածը շարժել և դնել ազատութեան իսկական ճանապարհի վրա զուգնթացաբար Տաճկահայերի հետ այդ ճամբան կտրել անցնելու համար:

Եւ այսօր անկարելի է յուսալ թէ այդ տարրը կը կարողանայ ազդել կովկասեան հայ ժողովրդի վրա, որը յեղափոխական տեսակետով աւելի բարձր և աւելի պահանջկոտ է այդ տարրից և գրեթէ ըմբոստացած նրա դէմ:

Ուստի, կրկին կովկասը ցնցելու, ժողովրդին գիմադրելու, իր գոյութիւնը պահպանելու և Տաճկահայութեան ազատագրութեան գործին բուռն կերպով աջակցել տալու գործը մնում է արտասահմանի վարդապետ հայ երիտասարդութեան վրա: Այսօր եւրոպայում ապրող վարդապետ երիտասարդութիւնը այլ եւս իր յեղափոխական գաղափարները միայն Տաճկահայերի մէջ տարածելու մասին չը պէտք է աշխատի, այլ և Ռուսաստանի հայերի:

Ուրախ ենք որ արտասահմանի կովկասահայ ուսանողութեան մէջ կան մարդիկ, որոնք այդ ըմբռնեցին և հրաւէր են կարգում մտածելու ճիգեր թափել կովկասի հայ ժողովրդի մէջ արժարձել յեղափոխական ոգին որոշ ուղղութեամբ և որոշ ու յայտնի նպատակի համար:

ՎԱՐՊՈ

## ՍՈՒԼԹԱՆԸ ՀԻՒԱՆԴ Է

«Պէրլինէր թակէպլատ» թերթը կը հաղորդէ թէ Սուլթանի առողջութիւնը բոլորովին իւանգարուած է, կը ատապաի կուրծքի հիւանդութեան մը եւ չի կրնար ննջիլ առանց քնարի գեղերու: Սուլթանին ծանրապէս հիւանդ ըլլալը կը հաստատեն նաեւ անոնք, որոնք վերջերս զայն տեսած են Սէլամըլըթի ժամանակ:

Սուլթանի անցուցած կեանքը դիտողներն նոյնիսկ կը զարմանան թէ ինչպէս ան մինչեւ օրս կարողացած է տոկալ իր երիտասարդ հասակի մէջ Համիտ ամենէն անսանձ իշխանազուններէն մին էր: Գիշեր ցերեկ ան կը թապալկէր անբարոյականութեան մէջ. իսկ գաւթ բարձրացած օրէն սկսեալ շարունակ յուզումներու եւ տուայտանքներու ենթարկուած է: Ազդի սպանումը եւ հարազատ եղբոր Մուրատի սուկալի վիճակը կը սարսափեցնէին վախկոտ Համիտը: Աչքի զարնող վախկոտ մըն է այս Սուլթանը, որ մշտապէս կը դողայ իր կեանքին համար: Անոր հոգոյն մէջ տիրապետող վախը զինքը հարկադրած է գաճը բարձրանալու օրէն սկսեալ, միայն իր անձին պաշտպանութեան համար մտածել: Անիկա թողոց Վոսփորի հրաշալի պալատները եւ բարձրացաւ Պէշիկթաշի բարձրունքին վրայ ուր յարձակում գործելը գիտար է, թէ ծովէն եւ թէ ցամաքէն, Համիտ եւրազ քեօյկը իսկոյն շքեղ պալատ մը դարձուց եւ զայն շրջապատեց աւելի շքեղ ապարանքներով, եւրազը շուտով մը քաղաքի վերածուեցաւ պարիսպներով եւ խրամներով, զօրանցներով եւ աշտարակներով շրջապատուած:

Միտնատ փաշան եւ իր ընկերները որոնք սպաննեցին Ազդը եւ բանտարկեցին Մուրատը բոլորն ալ քստորուեցան եւ սպաննուեցան: Նախ Համիտ անձնատուր եղաւ Չէրքէզներուն եւ անոնցմէ ստեղծեց իր թիկնապահ զօրքը: Բայց չէրքէզներու կողմէն Պալատին մէջ եղած խռովութիւնները Համիտը ստիպեցին ուրիշներու գերի վիճալ: Թուրքերուն վրայ բոլորովին հաւատ չուներ, իսկ չէրքէզները գինքը խաբեցին: Ուր փնտուր իր պաշտպանութիւնը, վերջապէս հասաւ այն համոզման թէ միպետ մը հանգիստ կրնայ ըլլալ միայն ազատ շրջապատողներ ունենալով, ուստի սկսաւ Պալատէն հեռացնել կրթութեամբ պատուաւոր սարքը:

Պալատ հրաւիրուեցան Ալպանացիները, քիւրաքը եւ Պոսնացիները, որոնց յանձնուեցան Պալատական բարձր պաշտօններ: Սուլթանը նախկին արիւննուշտ աւազակներէն կազմեց իր թիկնապահները (թիւֆէնկէն): Աստուցմէ զատ, Լագերէն, Արարներէն եւ Ալպանացիներէն կազմեց թիկնապահ զօրագուցը: Այդ զօրագուցին մէջ մուսաբ չուներ կրթութեամբ սպաններ: Անոնք թուրքի զօրքերուն մէջ ամենէն լաւ վիճակը ունին, թէ մեծ ոտիկ կտտանան եւ թէ լաւ զգեստներ կը կրեն:

Աստուց արտօնուած է ամեն բան ընել, միայն թէ փատիշահին հաւատարիմ մնալ:



նով դարձադրուեցան, և որոնք 300,000 է աւելի զոհեր տուին աշխարհի, հաշիւ սկսած են իրենց մանրամասնութիւններով Եւրոպայի յայտնութիւնը և թէեւ այնքան նոր, արդէն մոռցուած և պատմական աղէտներու կարգը պիտի գատուած ըլլային, եթէ հարկ ըլլար անյիշաչար գիւտնադէտներու խրատներուն հետեւիլ:

Սակայն անկից ի վեր հայտնուելի մէթոտիք բնաշնչման գործը կը շարունակուի աւելի յամբարայց տեղի ապահով միջոցներով, և ախտազերական ցածութեան հանդէպ, նախկին ոճիրներու հեղինակը կը խորհի իր գործը ամբողջացնել ու կրկին Անաստուի մէջ պահանջութեանց, թաւանի, առեւանգումի և հրդէհի փոթորիկը արձակել:

Յրանսացի և օտար երեւելի աշխատակիցներու աշխույժութեամբ, մենք պիտի մասնանիջ բնեք կատարուած վայրագութիւնները, ու պիտի յիշեցնենք Եւրոպայի, առանց երբեք ձանձրանալու, թէ, իր ստորագրած դաշնագրերով իսկ, գործադրելիք պարտականութիւններ ունի Մեծ Մարդասպանին հանդէպ, պարտականութիւններ իր յիմարութեան զոհերուն հանդէպ:

Նոր խաչակրութիւն մը յարուցանելու դիտաւորութիւն չունինք, և ոչ ալ կուզենք թրքական հողին վրայ գտնուած ցեղերէն կամ կրօնքներէն մէկուն ատելութեան օգին գրգռելու:

Բայց, Սուլթանին, իր հպատակը գտնուելու տխուր բաղդին ենթարկուած ամէն մէկ ժողովուրդին դէմ գործած ոճիրները հրապարակելու ամէն պատրաստ

տականութիւն ունենալով հանդերձ, մենք մասնաւորապէս պիտի յարինք հայկական տառապանքներուն:

Որովհետեւ, ասոնք անհունապէս աւելի դառն են միւսներէն:

Որովհետեւ, ասիկա ամենէն աւելի մտացի և արեւմտեան քաղաքակրթութեան ընդունակ ցեղի մը անմիջական մահու և կենաց խնդիրը դարձած է:

Որովհետեւ, գործնականապէս, Եւրոպան զինուած է, Պարսիկի դաշնագրով, այս ստորագրութեան վերջ տալու, և այսպէս, ամբողջ թուրքիոյ վերածնութիւնը պատրաստելու համար:

Մեր կողմէն յաջողութիւն կը մտկոյցենք մեր այս ազնիւ պաշտօնակիցներուն, յիշեցնելով միանգամայն թէ, իրենց այդ ձեռնարկը, թէեւ քիչ մը ուշ, պիտի արժանանայ ամբողջ հայութեան համակրանքին ու երախտագրտական զգացումներուն:

ԹՈՒՐԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐ ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ԴԱՆՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Այս դաշնագրութիւնը ուրկէ Պուլկարիա բաւական պիտի օգտուի, վերջնականապէս կնքուած է: Ահաւաստիկ անոր քանի մը կարեւոր կէտերը:

- 1. Թրքական ապրանքները առանց տուրքի պիտի մտնան Պուլկարիա, և Պուլկարականները փոխադարձաբար առանց տուրքի թուրքիա պիտի մտնան:
2. Պուլկարական ոչխարը, այծը, խոզը և հացհատիկները

թուրքիա մտցնելու համար 100 ին 8 տուրք պիտի վճարուի: Նոյնպէս թուրքիան Պուլկարիա մտնելիք թրքական աճառներու, մորթի և կաշիի և բամբակեղէնի համար 100 ին 8 տուրք պիտի վճարուի:

3. Աղը, ծխախոտը և ոգելից ըմպելիքները չի պիտի ենթարկուին այս պայմաններուն: Ատոնց ներմուծումը պիտի կատարուի կամ մինչեւ այսօր գոյութիւն ունեցող պայմաններու համեմատ, և կամ թէ նոր տուրքեր պիտի նշանակուին երկու կողմանց համաձայնութեամբ:

4. Պուլկարիան արքայ չի պիտի գնէ անուշեղէններու, իւղերու, ձկնեղէններու, բանջարեղէնի, սովորական աճառի, եսզմայի, կտաւէ, բամբակէ, բրդէ և մետաքսէ թաշկինակներու, մեղրամուսի և շինութեան փայտերու վրայ:

5. Բուն թրքական ապրանքներու համար օքտրուա չի պիտի վճարուի Պուլկարիա ներմուծուելու միջոցին:

Պուլկարական ապրանքներու համար ալ թուրքիոյ մէջ միայն պիտի վճարուի այն ինչ որ թրքական ապրանքներու համար կը վճարուի:

6. Մաքս չի պիտի բարձրացուի ոչ թրքական և ոչ պուլկարական ապրանքներու համար:

7. Թրքական ապրանքները մաքսէ ազատ ըլլալու համար, պէտք է վկայագիր ունենան իրենց արտադրուած տեղւոյն քաղաքապետէն, եթէ արժէքը 300 լէվէն բարձր չէ: Իսկ եթէ ապրանքը աւելի արժէք ունի, այն մամանակ վկայագիրը պէտք է

տրուի, թրքականներու համար, միւլթասարըֆէն կամ գաւառական վարչութեանէն, իսկ պուլկարականներունը, կամ գաւառապետէն կամ տեղական վարչութեանէն:

Այս դաշնագրութիւնը գործադրուի պիտի սկսի 1900 թ. 15 էն սկսեալ:

ՔՐԻԻԿԷՐ ԵՒ ԼՈՒՊԷ

Նախագահ Լուպէ Քրիկէրը ընդունած է սյնպէս, ինչպէս սովորաբար կընդունուին վեհապետները:

Երբ Քրիկէր կը մտնայ ոսկեղօծ դահլիճը, ուր Լուպէն իրեն կը սպասէր, աւելարդ ծերունիին տխրամած դէմքը կը յուզէ բոլոր ներկաները: Քրիկէր առանց բառ մը արտասանելու կը մտնայ Լուպէի, կը բարեւէ, ձեռքը կը սեղմէ և յետոյ իր բարձր իրանը շտկելով կը սկսի խօսիլ մերթ մեղմ, վըշտէն խեղդուած ձայնով, մերթ բարձր, ուրախութեան շեշտերով, որոնք կը հաստատէին իր զգացումները Յրանսայի ըրած ընդունելութեան առթիւ:

Մարսիլիոյ ցոյցերը, որոնցմով շնորհաւորեցին իր մուտքը վեհանձն Յրանսայի մէջ, իր ակնկալածը գերազանցած էին. իսկ Տիֆօնի, գողգոթայի նախաձեռնի կայարանի մէջ, ուր ժողովրդական ջերմ համակրանքը յալթական մուտքի մը վերածեց կարծես, Քրիկէր չը կըրցաւ իր արցունքը զսպելու Բետոյ, Բարիզը զինքը աւելի ծա-

հին են, և պաշտօնական դիւանապետներու կարծածիւր հայեցողութիւններէն շատ աւելի սնդիկ կանցնին: Այս վերջինները հնագրեան աւանդութիւններով և նեղ ու անցուկ սիւղուներով սնած, մօտէն ծանօթ են Չինական քաղաքականութեան զսպանակներուն, բայց անոնք չեն ձանձնար ժողովուրդը, անոր ազգային և ընկերական զայրոյթները, ու այն օրը, որ զայն պիտի հասկնան, չը պիտի կրնան անոնց վրայ որոշ դադար մը կազմել, և Եստեւարար անբաւական ու յիզուող հրահանգներ միայն պիտի զրկեն:

Այսօր Չինաստան ինքզինքը պաշտպանելու համար բոնի ուժի կոչում կընէ և իր այս անակնկալ ընդդիմաբան մէջ գոյց տուած բուռն արիւթիւնը կարծել կուտայ սպէտ կամ գէշ արամագրուած մտքերուն թէ անկիկ կը յարձակի: Այս կարծիքը բաձարցակուպէս սխալ է, մենք աղէկ պիտենք: Ու այս արիւնալի խոսքով թեանց—ուր Եւրոպացիները ընչաքաղցութիւնը և ծայրայեղ արծաթախրութիւնը ազատ սպարէզ գտած էին—միակ չբմեղանք կը գըտնենք այն աւանդութիւնները և այնքան իսկատիպ վայրագութիւնները, որոնցմով Չինաստան սովորութիւն ունի ինքզինքը պաշտպանելու և կամովին անգրտաւոր մեր զիւանազիտական ու միջազգային կեղծիքները:

Բայց ուժին դէմ ուժը միայն կրնայ մաքառիլ, եթէ—անիրականալի և գրեթէ յիմարական երազ—չը գտնուի, ձերմակ կամ գեղին ցեղին մէջ, ժողովուրդներու առաջնորդ մը որ կտրող ըլլայ անմիջապէս խաղաղութիւնը վերստեղծելու, չինական ցեղը աւելի մօտեցնելով իր փնտռած նիւթական յառաջդիմութեան, ուրկէ հետո պահել կաշխատի այսօրուան իր սարսափահար կայսրը:

Եւ աւելի լաւ չէ՞ր ըլլար որ Եւրոպական տէրութիւնները խաղաղ լուծում մը տային խնդրին, որով պիտի յաջողէին զսպարու անոնց աշխարհակալութեան բոլոր ձգտումները: Արդ՝ մենք հասանք այն կարծիքին թէ՛ պատերազմ մը, արիւնահեղ ու անմիջական, կամ կեղծ ու թաքուն, անխուսափելի է: Չինական գաղտնի ընկերութիւնները խիստ լաւ կազմակերպուած են զերբ պաշտպանելու համար: Որչա՞փ ատեն պիտի տեւէ իրենց կտրովի ընդդիմութիւնը: Մարդաբէն անգամ պիտի վարանէր պատասխանելու և պատմաբանն իսկ անձեռնհաս պիտի նկատէր ինքզինքը: Բայց պէտք է յիշել որ, Չինաստան՝ իր թշնամիներուն վրայ՝ գաղտնի կազմակերպութեան մը, իր սեփական հողին օրինաւոր պաշտպանութեան և անհամար ժողովրդեան մը երկակ և անհուն առաւելութիւններն ունի:

Եւ եթէ ամենազէշ կերպով ալ վայուած ըլլային մեզի հետ, դարձեալ մեզի անկարելի պիտի ըլլար միանալ անմեղ Եւրոպայի հետ գէպի այդ թշուառները արտայայտած զայրոյթի ու արհամարհանքի աղաղակներուն մէջ, որոնք կարող են պաշտպանել իրենց հողը, իրենց ընտանիքներն ու աստուածները, օտար խաբերայ արշաւանքներուն դէմ: Ժեզարու քաղաքակրթութեան մէջ քաղաքացի անոնք մեզի դէմ կը կոռուին այն միջոցներով զորս մենք գործածեցինք այնչափ դարերու ընթացքին մէջ:

Եւ, վերջապէս պէտք է յիշել որ անոնք միայն իրենց երկրին մէջ կը տարածուին, կը շարժեն, կը կողպատեն, բայց միայն իրենց աշխարհակալները, և այսպէս անոնք արդարացում մը ունին իրենց համար ուրկէ գերծ են Եւրոպացիները: Որհինք զանոնք դատապարտել առաջ թէ՛ մենք ի՞նչ կերպով պիտի վարուէինք այն չինացի զինուորներուն, երկրաչափներուն կամ Պուտայական քուրմներուն հետ, որոնք Բարիկ կամ Պերլին գաղով այն ընթացքը բռնէին, ինչ որ ունին այսօր Եւրոպայի զինուորները, երկրաչափները կամ հաւատաարած պաշտօնեաները Բէքինի, Քիսո-Չէուի և ուրիշ տեղերու մէջ, և մեր իսկ սկարութիւնները յիշելով զիտանքը նաեւ արդա-

րացնել ուրիշներու զայրոյթը: Երբեք այլ կերպ չի վարուեցան սպանիացիները Նաբոլիօնեան սարսափներու ատեն. իրենց երկիրը պաշտպանելու համար, Եւ եթէ կայ մարդու արիւն թափելու մեղմացուցիչ պատճառարանութիւն մը, ընդունինք որ միայն օրինաւոր ինքնապաշտպանութեան պարագան է այն: Ժողովուրդ մը իր հողին մէջ բաձարցակ տէր է, ինչպէս որ անխաբորձ իր տան տէրն է, Եւ երբ այն շարժառիթները որոնց համար Չինաստանը տակն ու վրայ կըլլայ, այնքան ցած ու ստորին են, որքան անոնք՝ որոնց համար կէս դարէ ի վեր Եւրոպան Չինաստանը կը գրաւէ, մարդ սկամայ հակամէտ կըլլայ բաձարցակ իրաւունք տու անոնց՝ որոնք ունեն միջոցով կը պաշտպանեն իրենց հայրենիքը և այսպիսով կը կատարեն մարդկային բնութեան իրենց վրայ դրած առաջին ու եւ զրիւնար պարսակաւորութիւնը (\*):

(\*) Թարգմ. «Չինական Նուվէլ» էն:

նօթացուց Թրանսայի հոգւոյն հետ, որ ամէն ազնիւ ձեռնարկութեան համար կը թրթռայ, մանաւանդ եթէ այդ ձեռնարկութիւնները գծաբառութիւններէ կը ծնին:

Քրիստոսի իր մշտական խոհումներու նիւթին դառնալով՝ շեշտեց այն անարդար պատերազմը, զոր երբեմն այնքա՛ն ազատամարտի մեծ պետութիւն մը յայտարարեց պաշտպանութիւնը մը պէ՛տք, որ կուզէր իր ազատութիւնը պաշտպանել: Քրիստոս խօսեցաւ պատերազմի սարսափներու մասին, ուր մարդկութիւնը կը յարգուէր միայն Պօէրնելու կողմէն: Իր զինուորները երկրագործներէն, որոնք արօրի հետ միասին հրացան կը կրեն իրենց ուսերուն վրայ: Անոնք զէնքը չեն գործածեր աշխարհակալութեան համար, այլ իրենց երկիրը և օճախը պաշտպանելու համար:

Երբ խորհրդանշան հոլանտերէնէ կը թարգմանէր ծերունիին խօսքերը պատերազմի սարսափներու մասին, Լուսիէ զայն կը ընդմիջէր ըսելով՝ «Ահա՛ սա, արդէն պատերազմը ինքնին սարսափելի է»:

Քրիստոս կը շարունակէր, կը բացատրէր թէ ինքը կը ճանչնայ իր յանձն առած գործին գծուարութիւնը, թէ ինք յայտնի մարդկային օգնութեան վրայ: Սակայն Աստուած, որուն արդարագատութեան ինք անյողողող կը զիմէ, բարձիթողի շքեր արգար գործ մը:

Երբ փառայել ծերունիին Աստուծոյ անունը տուաւ, անոր հիւանդ աչքերուն մէջ երեւցաւ նայումք մը՝ որ կը սուզէր անստուգութեան մէջ:

Լուսիէ տօգուեմով՝ պատասխանեց որ, կը ցաւակցի անոր հայրենիքի ցաւերուն, բայց Պօէրնելու քաջութիւնը, նոյնիսկ իր անյաջողութեանը մէջ, օրինակելի պիտի ըլլայ, և միութարանք պիտի գտնէ լուսաւորեալ աշխարհի հիացման մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մուշի առջնորդ Բարկէն վարդապետ քրտական հարստահարութեանց դէմ բողոքած ըլլալուն պատճառով ձերբակալուած է:

— Երեսուցէ մէջ Պոլսոյ թերթերէն միոյն կը գրեն թէ՛ վանքին միտրանութիւնը հանրագրութեամբ մը Յարութիւն պատրիարքէն կը խընդրեն վանքին եօթնամեայ հաշիւներն մատուցանել միաբանութեան ընդհանուր ժողովին:

— Պոլսոյ հայ բողոքականները ձեռնարկութիւններ կրնեն Բէրա Այնալը-Չիչէի կողմը 600 կանգուն գետնի մը վրայ, 3000 լիբանոյ մողովարան մը և վարժարան մը կառուցանել:

— Հոկտ. 28ին Մալաթիոյ մէջ եղած երկրաշարժէն ազգային առաջ-

նորդարանը անբնակելի ըլլալու չափ լիստուեր է:

— Պոլսոյ լրագրիչներուն մէջ կը կարդանք. Բերա Գըլ-Պուրնու բնակող բաշարած Թովհանէս Այնալը-Չիչէն բնակող Մանուկ Քիրէճեան, զի սակար տնձերը, որոնք ժամանակէ մը ի վեր հոկողութեան տակ էին, երեքարթի օր, Ղալաթիոյ քարաբին վրայ գրասարանները թափառելու ատեն ձերբակալուեցան, և գրպաններէն զի սակար թողարկուողութեամբ անմիջապէ կիցրոնական բանառութիւններուցան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն կը հայտնուի թէ՛ գերմանացիք կուզեն կարմիր ծովի Գումա կղզիին անախր մթերանոցի վերածել այս պատճառով երկար մեծ յուշումի մէջ է. թուրքերը այդ պահանջը զանազան կերպով կը բացատրեն: Սակայն տեղւոյն գերմանացիները կը պնդեն թէ՛ Գերմանիա այդ ինքզոյն մասին բանակցութեան մտած չէ, և գերման զեռպանը Սուլթանի հետ ունեցած տեսակցութեան միջոցին այդ խնդրի վրայ բնախօսած չէ, ոչ ոք հետեւ բտ Գերմանիայի այդ խնդրը վերջնականապէս լուծուած է:

— Սուլթանը իրատէսով մը ծովային նախարարին հրամայած է Նոր դրութեամբ յաճախակի մը պատուիրել Քրիմը Ամերիկեան գործարանին:

— Ամերիկեան մարտանաւ մը մտեր է Չիլիէի նաւահանգիստը, չը նայելով որ թուրքիոյ ծովային իշխանութիւնը հակառակած է:

Կը կարծուի թէ՛ Ամերիկայատու կուզէ ճնշում բանեցնել Խարբեղի մէջ Ամերիկեան հիւպատոսարան մը հաստատելու, և հայկական կոտորածներէ զիստուած իր հպատակներու զխաները գանձելու համար:

— Պատկերազարդ քարթ բօսզաններու սիրահարները այսուհետեւ պէտք է սուգ պահեն տաճակեան քարթերու համար: Կայսերական Նոր իրատէ մը կարգիլէ թրքական նամակատան պաշտօնեաներուն պատկերազարդ քարթերը ընդունիլ կամ զրկել:

Պոլսոյ թուրք խանութեաններու քով գտնուած բոլոր պատկերազարդ քարթերը կառավարութիւնը գրաւեց, իսկ օտարահպատակներու քով գտնուածները ծախու առաւ: Այսուհետեւ մաքսատուներ բոլոր նոր եկած պատկերազարդ քարթերը պիտի գրաւէ:

Ո՞վ գիտէ աս քարթերը Սուլթանին ի՞նչ օտարաբաղ զգած են. թերեւ անոնց մէջ կարմիր գոյնը կը գերազանցէ, և Սուլթանին կը յիշեցնէ Հայաստանի արեան գետերը . . .

— Պոլսոյ օրուական դեպքերը Չարին կողմէն Սուլթանին մատոյց լուսանկարներու ալպիւմ մը որ Չարի թագադրութեան հանգէտին մանրամասնութիւնները կը ներկայացնէ:

— Թարապուտի (Պէրպէրիտան) զինուորական հրամանատարը Բարձր, Գրան հաղորդած է թէ՛ նահանգին սահմաններէն դուրս բնակող արապ թափառական ցեղ մը ամբողջովին հպտակեցուցած է: Երբեք հրամանատարը իր կառավարութեան կը յանձնարարէ Թրանսայի հետ համաձայնութեան մը հանգիլ, իրենց կալուածներու սահմանները որոշելու համար, որպէս զի կարելի ըլլայ թրքական իշխանութիւնը տարածել այդ ցեղերու վրայ:

— Չարը Զինովիէի միջոցաւ իր շնորհակալութիւնը յայտնած է Սուլթանին որ բարեհաճած էր իբ հիւանդութեամբ հետաքրքրուիլ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

Իօհանէսպուրկէն Լօրտ Բօպէթս կը հեռագրէ թէ ճիշդ է որ իր կեանքին դէմ դաւաճութիւն եղած է, որուն պատճառաւ ձերբակալուած են հինգ իտալացիներ, չորս յոյն և մէկ ֆրանսացի, որոնք գատի պիտի են թարկուին: Գաղտնիքները մը տաղած էին «Սուրբ Աստուածածնայ» եկեղեցին օգր բարձրացնել ժամասացութեան ատեն: Լրագրիչները կը պահանջեն որ Թրանսովալի մէջ գտնուող օտարահպատակներու դէմ խիստ միջոցներ ձեռք առնուին:

— Ժէնէրալ Բնօքս արագ ընթացքով յաջողած է գիրք բռնել ժէնէրալ Տը Ուէթի և Օրանժ Րիվէրի մէջ տեղը: Իոյնմբեր 13ին Բնօքս գրուած է Տը Ուէթստորմը:

— Թրանսայի արտաքին գործոց նախարար Տէլքասէ հարցապնդող երեսփոխան Տընիսին յայտարարած է թէ՛ անօգուտ է Թրանսովալի համար միջամտութեան խնդիր բարձրացնել, և ինչ որ անօգուտ է յաճախալ զիստակար է:

Տընիս իր հարցապնդումը ետ առած է. որմէ յետոյ երեսփոխանական ժողովը միաձայն յայտարարած է իր համակրանքը Քրիստոսին:

— Կեապ-Թուանէ կը հաղորդեն իոյնմբեր 12ին:

«Չօլլանագիները հետզհետէ խիստ ատելութեամբ կը լեցունին դէպի անգլիացիները. բաճարցակ հականգլիական քարոզութիւններ կը լլան:

Պօէրնելու համակիր թերթերը կատարի պայքար կը մղեն անգլիական քաղաքականութեան դէմ: Ամէն օր կը մերկացնեն անգլիական ժէնէրալներու և զօրքերու ըրած բարբարոսու-

թիւնները: Քարի «Թայմզ» խորհուրդ կուտայ խիստ միջոցներ ձեռք առնել:

Աֆրիաները կը պատրաստուին մեծ ժողով մը ընելու Ուլէսթէրի մէջ, Հոլանտական կուսակցութեան պարագլուխները հակադրական ճառեր պիտի արտասանեն:

— Քանի մը անգլիական թերթեր Ռօպէրթսի դէմ եղած դաւաճութիւնը օտար անխիանականներու գործ կը համարեն:

— Անգլիական թերթերը հաստատելով որ Հարաւային Աֆրիկէ ներկայ վիճակէն աւելի գէշ վիճակ չի կրնար ունենալ, կը յաւելուն թէ՛ իրապէս շատ ստորնացուցիչ պիտի ըլլայ, եթէ Բրէթօ, Իսայի իշխանութիւնը չի կըրնայ երաշխաւորել Քարի օրինակաւ զաղթականներու ապահովութիւնը, և խիստ միջոցներ կառավարկեն անհնազանդները զսոյելու համար:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Իոյնմբեր 16ին Հալասի գործակալութիւնը Բէքինէն կը հաղորդէ թէ 14ին Գերմանիոյ, Անգլիոյ, Աւստրօ-Հունգարիոյ, Պելճիկայի և Իտալիոյ դեսպանները յայտարարեցին որ իրենք իրենց կառավարութիւններէն լիազօրութիւն են ստացած ստորագրելու գիւանդակաւան մարմնոյն ընդունած պայմանները:

Մնացած դեսպանները դեռ ստացած չեն իրենց կառավարութիւններու վերջնական հրահանգները:

— Թիէնցիներէն Նոյ. 13ին կը հեռագրեն որ քաղաքին վարչութիւնը որ կազմուած է գաշնակիցներու ներկայացուցիչներէն միաձայն որոշած է քաղաքի պարիսպները կործանել և ամրութիւններու շուրջը գտնուած խրամատները լեցնել:

— Լօնտօնէն կը հաղորդեն որ Բէքինի լրագրիչները կը հաստատեն թէ ռուսական լիազօրը Զինաստանի խնդիրներու մասին տուած համաձայնութիւնը ետ առած է և հրաժարած է ստորագրել բանակցութեան պայմանները եթէ ամբաստանալիները խստի պատժելու և Զինաստանէն տուպանք առնելու պայմանները չի փոխուին:

— Վաշինկթօնի պետական շքանակներու մէջ կը կարծեն թէ զաշնակից պետութեանց Բէքինի դեսպաններուն ընդունած բանակցութեան պայմանները իրենց ներկայ ձեռով չի պիտի հաստատուին պետութիւններու շատելէն, որովհետեւ ճարն, Միացեալ Նահանգները, Թրանսա, Ռուսիա թերեւ և Անգլիան ալ պայմանները մեղմացնելու կողմնակից են: